Ալեքսանդր Շիրվանզադե

Թամաշա

Հարգո խմբագիր, դուք ինձ առաջարկում եք նկարագրել այն օպերետային ներկայացումը, որ անցյալ մարտի 22-ին տեղի ունեցավ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի դահլիճում, հօգուտ, ներողություն, ի բարոյական անկումն Հայոց հրատարակչական ընկերության: Ճշմարիտն ասած, մեծ պարտք եք դնում ինձ վրա, դա մի դժվար գործ է: Բայց կփորձեմ կատարել այդ պարտքը և կաշխատեմ նկարագրել այդ երևելի հանդեսը ֆոտոգրաֆիկական ճշտությամբ, եզրակացությունները թողնելով ընթերցողներին:

Օրը շաբաթ էր, երեկոյան յոթ ժամը: Ես կատարում էի իմ սովորական զբոսանքը Գոլովինսկիյ պրոսպեկտում: Մեկ էլ տեսնեմ դեմուդեմ վազում է Կոլոլ թաղի պատվավոր քաղաքացի խարազ Սորոիսի տղա հաստափոր, հաստավիզ, է՞հ, թող չնեղանա բարեկամս, մի քիչ էլ հաստագլուխ Գևոն: Պետք է ասած, որ այն օրից, երբ Գևոն ապօրինի ճանապարհով ուրիշների բիձայից ժառանգություն է ստացել, այլևս նրան չեմ հանդիպում իմ բարեկամ տներում, ուր նա սովորաբար գալիս էր ձրի ճաշեր և ընթրիքներ անուշ անելու: Բարով, Գևո ջան, էդ ո՞ւր ես շտապում, հարցրի ես, տեսնելով բարեկամիս քրտնած և հևալով:

Գնա՛ կորիր, քո գլուխը չունիմ, պատասխանեց Գևոն, ինձ մի կողմ հրելով և ինքն առաջ վազելով: Թե Գևոն իմ գլուխը չունի, այդ ևս վաղուց գիտեի, վասնզի նա իսկի գլուխ էլ չունի, բայց դարձյալ հետաքրքրվեցի, որ իմանամ նրա այս անգամվա գլուխ չունենալու պատճառը:

Մուլա՛փ, թե ախպեր ես, հարցրի, էլի ի՛նչ է պատահել:

Էն է պատահել, որ դուն ռենեգատիս:

Վա, վա, Գևո ջան, էդ ինչ խուրը տկեմեն իս դուրս տալի. ռենեգատս վուրն է:

Ռենեգատն էն է, վուր ինքը քելեխ չի սիրի ու ուրիշի գլխին էլ հարամ կոնե: Մի գնա, էէ՛, ձլիվ փուրս կշտացել է, էկիլ իք ու կերածս գլխիս հառամ իք անում: Դուն ռենեգատ իս, դուն ազնիվ ու մաքուր գործիչ չիս:

Հասկացա, իժո՞ւմ:

Իժում, էլ ինչ իժում: Իժումն էն է, վուր էս իրիկուն քիզ ու քիզ նմաններին պիտի սիվցնինք, վունց որ դուն իս մեր երիսը սիվցնում խալխի առաջ...

Ի՞նչ սիվցնիլ, ի՞նչ իս ասում:

Ընտրություն է, բաս չի՞ս իմացի, աբա թե ղոչաղ իս, արի հետս ու միր սիվ կենճիքը համբրի:

Ասաց բարեկամս ու վազեց դեպի Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի դահլիճը: Ես մատս կծեցի ու հետևեցի նրան: Մտնում եմ դահլիճի նախասենյակը և ի՛նչ եմ տեսնում: Մեջտեղ կրակ բռնածի պես դեսուդեն է վազում օրվա հերոս սև Սանդրոն:

Սանդրո ջան, վո՞ւնց ին միր բանիրը, շնչասպառ գոչում է Գևոն:

Դիփունանցն էլ բերիլ իմ, պատասխանում է Սանդրոն հանդիսավոր եղանակով:

Գևոն փաթաթվում է Սանդրոյի վզին, ու պաչպչվում են: Նայում եմ շուրջս և սարսափում: Գլուխս սկսում է պտույտ գալ՝ դանձիլի, սոխի, սխտորի, թթու դրած բոխու հոտից: Լսում եմ բղկոցների, օրոշտալու ձայներ, և ինձ թվում է, թե ջհուդի բաղնիք եմ ընկել: Ըստ երևույթին նույնն են զգում և մի խումբ տիկիններ ու օրիորդներ, որովհետև բոլորն էլ թաշկինակներով ծածկել են իրանց քթերը:

Այդ ի՞նչ է պատահել . հարցնում եմ մի թաշկինակավոր տիկնոջ:

Մի՞թե չգիտեք, այսօր ներկայացում է հոգուտ Հայոց հրատարակչական ընկերության. մենք էլ եկել ենք թամաշան տեսնելու: Տեսեք, պարոն Մաղքոս, դուք մեզ մոտեցաք, այն մյուս խումբ տիկիններն ու օրիորդները թարս-թարս են մտիկ տալիս մեզ և ձեզ: Զգույշ, չլինի՞, թե ձեզ սևացնեն:

Տիկին, պատասխանում եմ ես, ես ո՛չ ընտրող եմ, ո՛չ ընտրվող, որ սևացնեմ, կամ ինձ սևացնեն: Թող ինչքան ուզում են ինձանից նեղանան, բայց ես էսթետիկական ճաշակ ունեմ, թույլ տվեք ձեր շրջանում մնալ:

Հետզհետե հասարակությունը բազմանում է: Ես բարձրանում եմ վերնահարկը: Դահլիճը շատ լուսավորված է, բայց դարձյալ տիրում է մթություն, որովհետև այնքան սև դեմքեր և մեծ քթեր կան, որ ամեն լույս ընդունակ են մթնացնելու:

Ամբիոն է բարձրանում կլորիկ, կարմիր աչքերով, դեղին ականջներով, կարմիր երեսով մոտ 45 տարեկան մի պարոն: Դա հայտնի քելեխբաշին է, որ գիտե միաժամանակ հինգ տեղ քելեխ ուտել: Եվ այնքան յուղալի քելեխներ է կերել, որ երեսից, աչքերից, ճակատից և ամբողջ փայլուն դեմքից դմակի յուղ է թափվում: Նա, զանգահարում է: Ժողովականները ներս են գալիս: Երևում են մի խումբ չեզոք մարդիկ, որոնք ոչ մի հետին միտք չունեն, ոչ մի քելեխի հետ կապ չունեն և եկել են լոկ թամաշայի համար: Ներս է մտնում հայ գրականության ներկայացուցիչների փոքրիկ խումբը՝ 8 10 հոգի և համեմատաբար նստում ուր որ պատահում է:

Նրանց հետ ներս են մտնում թաշկինակավոր տիկիններրն ու օրիորդները և համեստաբար նստում, ինչպես վայել է կրթված գեղեցիկ սեռին:

Վերջապես դահլիճը դղրդում է, և երևում է մի ահագին փիղ: Նրա ճակատին մեղրամոմի մխով գրված է . ես եմ վիթխարի մղդին: Նրա հաստ պարանոցին նստած է գեղարվեստների մանրացում, տիեզերահռչակ Համբարձի ամին: Քնքշության և գրացիայի ներկայացուցիչը, հանդիսավոր օրվա առիթով, հագել է կարմիր ֆրակ, սպիտակ ժիլետ, դեղին գուլպաներ: Ֆրակը կարված է Թավրիզի առաջնորդարանի մահուդից, ժիլետը՝ Բարեգործական ընկերության «կրկնակի» անդորրագրերից: Դեմքը վերին աստիճանի հրապուրիչ է, ճակատը փայլում է ապոլլոնյան հպարտությամբ, աչքերը կայծեր են արձակում, կայծեր, որոնցից

յուրաքանչյուրը մի-մի գեղեցկուհու սրտում հրդեհ է առաջացնում:

Նրա հետևում նստած է գիտության մարմնացում, նույնպես տիեզերահոչակ Ստեփան ափուն: Նա հագած է սև քղամիդ, մի ձեռին պահած մի մեծ մատյան, մյուսում՝ մի եղեգնյա գրիչ և խորասուզված գրում է. «Ես և իմ անցյալը» վերնագրով մի շարադրություն: Մերթ ընդ մերթ նրա մեջ զարթնում է բնական ձգտում՝ դեն ձգել մատյանն ու գրիչը, վեր կենալ, քղամիդի փեշերը վեր քաշել և փղի վրա մի սիրուն կանկան պարել: Բայց լրջամիտ Ապոլլոնը ամուր բռնել է նրա փեշերից և թույլ չի տալիս:

Գեղեցկի և գիտության հետևում տեղավորված է դեղին աչքերով, տափակ ճակատով և ճյուղունդրի պես կարմիր երեսով ու ականջներով մի 35 տարեկան մարդ, որ խիստ նման է Թամամշևի քարվանսարայի շկափչիկի: Դա ինքն է Բիսմարկի և Մոլթքեի մտերիմ բարեկամ քաջամարտիկը: Նա զինված է ոտից մինչև գլուխ և աջ թևի վրա բռնած է մի վահան. նրա աչքերից մեղր, ներողություն, հուր է թափվում, իսկ դեմքից ալիզարին, ներողություն, կրակ... Նա սոսկալի է և շարունակ բեղերը սրելով, մարտի հայացքներ է ձգում իր շուրջը: Նրա ձախ երեսի վրա նշմարվում է մի սպի: Դա մի նշանավոր ճակատամարտում ստացած վերքի հետքն է, որ ունի մարդկային աջ ձեռի ափի դրոշմը, նրա կրծքին քաշ է արած մի ոսկե ժետոն, որի վրա փորագրված է. ապրիլի 9-ին արքունական թատրոն:

Խեչո, մի վախենա, էստի իմ,- ասում է մեկը:

Դա Սանդրոն է, որ մի դագանակ ձեռին, փղին բիզ-բիզ անելով ներս է քաշում: Փղի կարճլիկ պոչից քաշ է ընկել մեր Գևոն:

Սանդրոն գոռում է. ՃանապարՀ տվեք մաքուր և անարատ գործիչներին...

Ճանապարհ տվեք...

Դահլիճը թնդում է ծափահարություններով: Փիղը մաքուր և անարատ գործիքներին ցած է բերում դահլիճի աջ կողմում . այնինչ՝ գործիչները ազատամիտ լինելով, պիտի ձախ կողմը բռնեին: Բայց փիղը ինչ գիտե

պառլամենտական կարգ ու կանոնը. նաև մաքուր ու անարատ գործիչները չգիտեն, որ աջ և ձախը պառլամենտում նախագահի կողմից է հաշվում:

Քելեխբաշին երեսի յուղը սրբելով, զանգակ է հնչեցնում և հրավիրում նախագահ ընտրել: Խուժանը գոռալով, միմյանց հրելով, ոտքի է կանգնում և քվեարկում: Ձայների ահագին մեծամասնությամբ ընտրվում է մի մարդ՝ սափրված, եղած, փայլուն երեսով: Նա ունքեր չունի, ոսկրոտ ճակատի տակ աչքերի փոխարեն երևում են երկու բիզով փորած ծակեր: Նա հանդիսավոր բազմում է նախագահական բազկաթոռի վրա: Նրա աջ կողմում նստում է յուղալի երեսով քելեխբաշին, իսկ ձախ կողմում մի ինչ-որ տկճոր, միթամ քարտուղարն է...

Կարդում են ինչ-որ տեղեկագիր: Գրականության ներկայացուցիչները միամտաբար կարծելով, թե իրանք գրականության հիմնարկության մեջ են, ոտքի են կանգնում խոսելու: Բայց նախագահը նրանց կարգի է հրավիրում . բացատրելով, թե գրականները օպերետային ներկայացումներին մասնակցելու իրավունք չունեն:

Տեղեկագիրը հաստատվում է միաձայն: Սանդրոն մատներով դհոլ է ածում փղի փորի վրա . գիտության մարմնացումը քղամիդի փեշերը բարձրացնելով, սկսում է կանկան պարել: Մարսը բեղերը սրում է և ձախ երեսը բաց անում: Գեղարվեստը բացականչում է.

Լոխ էլ մերոնք են, լոխ էլ մաքուր ու անարատ են, հունց որ ես:

Հիմա տրեպակա, ասում է նախագահը:

Հա, ընտրութոն, ընտրութոն, գոռում է Համբարձի ամին, և բոլորը սոսկում են: Քվեարկում են, և ձայների ահռելի մեծամասնությամբ ընտրվում են՝ մի ոչխար, մի փոդրաթչի ու վաշխառու, քելեխբաշին և մղդսին: Փիղը իր առջևի թաթերը դնում է նախագահի սեղանի վրա, հասարակությանը շնորհակալություն է հայտնում, հետո սկսում է երգել Այսմավուրքից մի ռոմանս: Մարսը ժետոնը բարձրացնում է գլխից վերև և գոռում.

Ուռա՜:

Ժողովականների չեզոք մասը շտապում է հեռանալ դահլիճից: Մնում են մաքուրներն ու անարատները:

Գրականության ներկայացուցիչների և թաշկինակավորների փոքրիկ խումբը նույնպես ուզում է հեռանալ: Բայց այդ միջոցին նրանք լսում են, թե օպերետը վերջացել է, այժմ պիտի ֆարս խաղացվի: Բայց այս մասին մյուս անգամ: